Արձանագրություն N 3

«ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 » ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստի

ք.Գորիս, Գ.Տաթևացի 31

«11» «փետրվար » 2019թ.
ժ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Մաթևոսյան և Հասմիկ Փարսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Տոռոզյան

1 «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը
(Լևոն Հարությունյան)

1.1«ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 » ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019թվականի փետրվարի 11-ին, ժամը 11:00-ին, Սյունիքի մարզ, ք.Գորիս, Գր.Տաթևացի 31 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.
(Լևոն Հարությունյան)

2.1. «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 » ծածկագրով ընթացակարգի քարտուղարի կողմից 2019թվականի փետրվարի 5 -ին, ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից փետրվարի 8-ին սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն, համաձայն որի <Նատալի ֆարմ> ՍՊԸ, <Լիկվոր> ՓԲԸ, <Արֆարմացիա> ՓԲԸ, <Թեոֆարմա> ՍՊԸ, <Ռիխտեր-Լամբրոն> Հ/Ձ , <Ալֆա-ֆարմ իմպորտ> ՓԲԸ, <Կոտայք> ՍՊԸ, <Լեյկո> ՍՊԸ, <Արմենֆարմ> ՍՊԸ մասնակիցներին տրվել է դրական եզրակացություն և մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող :

2.2 <Ագաստ> ՍՊԸ-ին տրվել է բացասական եզրակացություն, համաձայն որի <Ագաստ> ՍՊԸ – ի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացությունը՝ <Ագաստ> ՍՊԸ –ին ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 47-րդ կետի համաձայն տրվում է մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Լևոն Հարությունյան)

3.1. «ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ծանուցումը ուղարկելուց մեկ աշխատանքային օր հետո ժամը 14:00-ին, *ք. Գորիս, Գր.Տաթևացի 31* հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լևոն Հարությունյան

Անդամներ _____ Լուսինե Մաթևոսյան

_____ Հասմիկ Փարսյան

Քարտուղար _____ Կարինե Տոռոզյան